ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

N 073-229 գ. Արշալույս

13 դեկտեմբերի 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 64-Ն որոշումը:

Համայնքի ավագանու նշված որոշումը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր 4 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

13 12 2012թ. 11252-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

13 դեկտեմբերի 2012թ.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի<<ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ>> N 64-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 5-ի <<Մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի մասին>> N 64-Ն որոշման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է ապահովելու համայնքի տարածքում <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների հավասար մատչելիությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2012թ. Թիվ 64-Ն

ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի գյուղական համայնքի կողմից 2013 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1. Նալբանդյան Ռուբեն			
2.Մերոբյան Ասատուր			
3.Շահբազյան Ավագ			
4.Մկրտչյան Արթուր			
5.Շահբազյան Աշոտ			
6. Իսրայելյան Արամ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի դեկտեմբերի 5
գ. Արշալույս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արշալույսի
գյուղական համայնքի ավագանու
2012 թվականի դեկտեմբերի 5-ի
թիվ [illegible] որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի գյուղական համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող, ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1) համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար՝ հինգ հազար դրամ.
2) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ երեք հազար դրամ.
3) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու մասին՝ երեք հազար դրամ.
4) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ և փոստային առաքումներ (այդ թվում՝ դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ երեք հազար դրամ.
5) համայնքի բնակիչ համարվող անձանց բնութագիր տալու համար՝ երեք հազար դրամ.

2. Համայնքի տարածքում համայնքի բնակիչ համարվող անձանց մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար՝ մեկ տնտեսությանը՝ երեք հազար դրամ.

3. Համայնքային ենթակայության ստեղծված դպրոցի երեխաների համար ծնողական վճար սահմանել՝ մեկ հազար դրամ.

1) բնակչության առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել հետևյալ չափերով.

ա. մեկ ընտանիքից երեխա դպրոց հաճախող երկու և ավելի երեխաների համար՝ 75 տոկոսի չափով՝ յոթ հարյուր հիսուն դրամ.
բ. միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ 50 տոկոսի չափով՝ հինգ հարյուր դրամ.
գ. երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ 25 տոկոսի չափով՝ երկու հարյուր հիսուն դրամ.
դ. զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների, ինչպես նաև առաջին կարգի հաշմանդամների երեխաների համար՝ 100 տոկոսի չափով: